ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ՊԱՏ-2022/48 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ և ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» նոյեմբերի 2022 թվական

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Նարեկ Մելքումյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՔՎԱՆՏՈՐԻ ԱՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ալեքսեյ Լեզնիկովի որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 399-Լ (այսուհետ նաև՝ Որոշում), և ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի N 1084-Ն որոշումները՝ 1043 բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) «11018 Պետական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) իրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Որոշման դրույթներով հաստատված կարգով Ծրագրի և Միջոցառման իրականացման շրջանակներում Կազմակերպությանը հատկացնել պետական աջակցություն, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է պահպանել Որոշման դրույթներով սահմանված պայմանները:

2. Պայմանագրի գինը

2.1. Սույն Պայմանագրով Կազմակերպությանը տրամադրվող պետական աջակցության չափը հուլիս և օգոստոս ամիսների համար կազմում 151,433,358 (հարյուր հիսունմեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր հիսունութ) ՀՀ դրամ:

2.2. Նախարարությունը պետական աջակցության նպատակով տրամադրվող գումարները փոխանցում է Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Նախարարությունն իրավունք ունի պայմանագրով նախատեսված պետական աջակցության գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

3. Աջակցությունը տրամադրելու և ծախսելու կարգ

3.1 Սույն Պայմանագրով Կազմակերպությանը պետական աջակցություն է տրվում Որոշման դրույթներով հաստատված կարգին համապատասխան:

3.2 Կազմակերպությունը պարտավոր է ապահովել սույն Պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացումը:

3.3 Սույն Պայմանագրի 2.1 կետով նախատեսված միջոցները պետք է ծախսվեն սույն Պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակներին համապատասխան:

3.4 Կազմակերպությունը պարտավոր է հաշվապահական փաստաթղթերը վարել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

4.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները,

գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, ՀՀ Կառավարության կամ վարչապետի, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5.Այլ դրույթներ

5.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5.2 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

5.3 Պայմանագիրը կնքվում է Պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

5.4 Այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված կարգով սահմանված պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինս չի համապատասխանում ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի առեվտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ N 399-Լ որոշման պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Նախարարությունը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար:

5.5 Սույն Պայմանագրի 5.4 կետով նախատեսված դեպքերով Պայմանագրի լուծման դեպքում Կազմակերպությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

5.6 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆԱ գործառնական վարչություն Հ/Հ 900011040773 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Նարեկ Մելքումյան (ստորագրություն)	«ՔՎԱՆՏՈՐԻ ԱՄ» ՍՊԸ ք. Երևան, Վարդանանց 15/4 Հ/Հ 20528222367110001 ՀՎՀՀ 02854679 Տնօրեն՝ Լևքսեյ Լեզնիկով (ստորագրություն)